


## Ս. ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Փետրվարի 17-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մեծ շուքով նշվեց Ս. Ղևոնդյանց քահանաների տոնը: Այս առիթով հայոց հոգևոր կենտրոնում էին հավաքվել Հայաստանյան թեմերի շուրջ 100 քահանաներ՝ վերստին նորոգելու իրենց ուխտն Աստծո հետ և հայտնելու իրենց հավատարմությունն ու սերը հանդեպ Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ու Ամենայն Հայոց Հայրապետը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Արցախի թեմի հոգևոր սպասավոր, Գանձասարի վանահայր Տ. Հովհաննես քհն. Հովհաննիսյանը (տե՛ս էջ 38):

Ս. Պատարագի ավարտին տեղի ունեցավ քահանայական հավաք, որի քննարկման նյութն էր Եկեղեցու ծառայությունը երիտասարդության շրջանում: Վեհափառ Հայրապետի անունից ներկաներին ողջունեց Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանը՝ ներկայացնելով օրվա խորհուրդն ու ժողովի կանոնակարգը: Հայաստանի և Արցախի թեմերի ներկայացուցիչների խոսքերից հետո հոգևորականներն արտահայտեցին իրենց մտորումներն ու մտահոգություններն արծարծված խնդիրների վերաբերյալ:

Հավաքի ավարտին Վեհափառ Հայրապետն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց հոգևոր դասին և հորդորեց հովվել մեր ժողովրդին Քրիստոսի Ավետարանի լույս պատգամներով՝ առավել ջանասիրությամբ և նվիրումով կրելով Քրիստոսի քաղցր լուծը: «Մեծապես ուրախ ենք, որ Տերն ընձեռում է մեզ այսպիսի պահեր՝ հանդիպելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, մեր ուխտը վերանորոգելու, մեր առաքելության ուղին առավել հստակ դարձնելու, աղոթքով գոտեպնդվելու, աղոթքով զորանալու և այս դժվարին ժամանակներում մեր առաքելությունն իրականացնելու համար»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Ի նշանավորումն Ս. Ղևոնդյանց տոնի և ի գնահատություն իրենց ծառայության՝ Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակով Հայաստանի և Արցախի թեմերից 3 քահանաներ արժանացան ավագ քահանայության և 6-ը՝ ծաղկյա փիլոն կրելու պատվի, իսկ 17-ը լանջախաչ կրելու իրավունք ստացան:

Քահանայական հավաքից հետո Մայր Աթոռի միաբանները, ներկա թեմական առաջնորդները և թեմերից եկած քահանաները Մայր Տաճարում մասնակցեցին երեկոյան ժամերգության:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*